*Արձանագրություն* N 2

*«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

*24 օգոստոսի 2021թ, ժամը 11:00,*
*Նոր Գեղի համայնք,*
*Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղիի համայնքապետարան*

*Մասնակցում էին հանձնաժողովի՝*
*նախագահ Տ.Գրիգորյան*
*անդամներ՝*
*Ա.Բաբախանան*
*Լ.Բարսեղյան*
*Քարտուղար ՝ Կ. Հայրապետյան*

***1.Տեղեկություններ «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին***

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Ֆ. Թևոսյան 64 հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին:

Ընդունվել է որոշում կողմ-3, դեմ-0:

2. ***«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին***

**2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.**

| N | Մասնակցի | |
|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն |
| 1 | <<Կառլեն Սուրենի Ռուստամյան>> ԱՁ | ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Բյուրական 1-ին փող. 8-րդ փակ. տ. 1 |
| 2 | <<Մ.ԲՈՒԽՏ>> ՍՊԸ | Արարատի մարզ, գ.Հայանիստ Էջմիածնի խճղ. 35 |

**3. Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգի մասին**

3.1 Մասնակիցների հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել է սահմանված կարգին համապատասխան:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմանների մասին**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացվել է հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ մասնակիցների կողմից ներկայցված գնային առաջարկների մասին**

5.1 մասնակիցների կողմից առաջարկված գինը պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

| Հ/Հ | *Մասնակիցների անվանումը* | **Գնային առաջարկը (առանց ԱԱՀ)** | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գին | Նախաhա |
| 1 | <<Կառլեն Սուրենի Ռուստամյան>> ԱՁ | 59 229 000 | 11 845 800 | 71 074 800 | |
| 2 | <<Մ.ԲՈՒԽՏ>> ՍՊԸ | 40 605 000 | 8 121 000 | 48 726 000 | |

5.2 Մասնակիցների կողմից ներկայցված գնային առաջարկներում չկան թվաբանական սխալներ

**Հանձնաժողովը որոշեց՝**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 5-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջները, կասեցնել և վարել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Եթե բանակցությունների ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված առաջին րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա բանակցությունները համարվում են ավարտված:.

## 6. Տեղեկատվություն հաջորդ նիստի օրվա և ժամի մասին

*6.1* «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2021 թվականի օգոստոսի 25-ին ժամը 11:00-ին Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, Ֆ.Թևոսյան փողոց 64 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի*

*նախագահ* — *Տ.Գրիգորյան*

*անդամներ*

*Ա.Բաբախանյան*

*Լ. Բարսեղյան*

*քարտուղար* — *Կ.Հայրապետյան*